ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԱՐԵՎԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

---

26. Փետրվարի 2013թ. | թիվ 31

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊՐՆ. Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Ձեզ է ներկայացվում Արևիկ համայնքի ավագանու 2013թ վականի փետրվարի 15-ին կայացած թիվ 1 նիստի որոշումների մեկ օրինակը:

Առդիր՝ 11 թերթ:

Արևիկ համայնքի ղեկավար՝ Գ. Ծատուրյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 2215-13
«06» 03 2013 թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՐԵՎԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«15» Փետրվարի 2013թ — թիվ 1

## ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի չորրորդ մասով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկի գյուղական համայնքի ավագանու թիվ 1 նիստի օրակարգը՝հաստատելու մասին համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Ավագանու անդամներ՝ | կողմ, | դեմ |
|---|---|---|
| Ա. Բեգլարյան | | |
| Հ. Ասատրյան | | |
| Հ. Շահնազարյան | | |
| Ա. Ալոյան | | |
| Ղ. Ղարիբյան | | |
| Գ. Գրիգորյան | | |

Արևիկի գյուղական համայնքի ղեկավար՝ Գ. Ծատուրյան

2013թվական փետրվարի «15»

գ. Արևիկ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿԻ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2013Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի ԹԻՎ 1

# ՕՐԱԿԱՐԳ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկի գյուղական համայնքի ավագանու թիվ 1 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկի համայնքի համայնքային ծառայողների թափուր պաշտոնի մրցույթի անցկացման մասին և Արևիկ համայնքի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ավագանու անհատական և քանակական կազմը հաստատելու և ավագանու 2009 թվականի ապրիլի 28-ի թիվ 2 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

/Զեկուցող՝ համայնքի ղեկավար՝ Գ. Ծատուրյան/

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկի համայնքի ավագանու նիստի ժամանակացույցը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ համայնքի ղեկավար՝ Գ. Ծատուրյան/

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկի համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնություն ցույց տալու մասին:

/Զեկուցող՝ աշխատակազմի քարտուղար՝ Ս. Առաքելյան/

/Զեկուցող՝ համայնքի ղեկավար՝ Գ. Ծատուրյան

5. Հիմք ընդունելով ՀՀ օրենքի գնումների մասին օրենքի 168 որոշման 32կետի 5-րդ ենթախմբի ա)կետը և խմելաջրի պոմպերի վերանորոգման հարցի հրատապությունը՝ պոմպերի վերենորոգման աշխատանքները կատարել բաց ընթացակարգով՝ առանց հայտարարության:

/Զեկուցող՝ համայնքի ղեկավար՝ Գ. Ծատուրյան/

6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկի համայնքի կուլտուրայի տան տանիքը վերանորոգելու ծրագրի հաստատման հարցը:

/Զեկուցող՝ ղեկավարի տեղակալ՝ Ք. Դավթյան/

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՐԵՎԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

---

«15» Փետրվարի 2013թ                                                    թիվ 2

## ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԵՎ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի ԹԻՎ 2 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին»Յայաստանի Յանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով մասով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի , 1-ին մասի , 1-ին կետի (բ) ենթակետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկել ավագանու թվով 2 անդամներ համաձայն հավելվածի.

2. ՈՒժը կորցրած ճանաչել Արևիկ համայնքի ավագանու 2009թ . ապրիլի 28-ի թիվ 2 որոշումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝                    կողմ                    դեմ

Ա. Բեգլարյան

Ղ. Ղարիբյան

Գ. Գրիգորյան

Ա. Ալոյան

Հ. Շահնազարյան

Հ. Ասատրյան

Արևիկի գյուղական համայնքի ղեկավար Գ. Ծատուրյան

2013թվական փետրվարի «15»
գ. Արևիկ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿԻ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2013Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի ԹԻՎ 2

ՈՐՈՇՄԱՆ

1. Գրիգորյան Գագիկ
2. Մարկոսյան Տիգրան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱՐԵՎԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«15» Փետրվարի 2013թ. թիվ 3

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Տ եղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի երկրորդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկի գյուղական համայնքի ավագանու նիստերի անցկացման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ |
| --- | --- | --- |
| Բեգլարյան Աշոտ | | |
| Ղարիբյան Ղուկաս | | |
| Գրիգորյան Գագիկ | | |
| Ալոյան Ալի | | |
| Շահնազարյան Հակոբ | | |
| Ասատրյան Հրաչիա | | |

Համայնքի ղեկավար Գ. Ծատուրյան

2013թվականի

փետրվարի «15» Գ. Արևիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2013Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի ԹԻՎ 3
ՈՐՈՇՄԱՆ

# ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

**2013թ. ավագանու նիստերը անցկացնել**

Փետրվար

Ապրիլ

Հունիս

Օգոստոս

Հոկտեմբեր

Դեկտեմբեր

ամիսներին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԱՐԵՎԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

---

« 15» Փետրվարի 2013թ. թիվ 4

# ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ |
|---|---|---|
| Բեգլարյան Աշոտ | | |
| Ղարիբյան Ղուկաս | | |
| Գրիգորյան Գագիկ | | |
| Ալոյան Ալի | | |
| Շահնազարյան Հակոբ | | |
| Ասատրյան Հրաչիա | | |

Համայնքի ղեկավար՝ Գ. Ծատուրյանյան

2013 թվականի փետրվարի «15»

Գ. Արևիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2013Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի ԹԻՎ 4
ՈՐՈՇՄԱՆ

# ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

| N | անուն, ազգանուն | հազ. դրամ |
|---|---|---|
| 1. | Մարյանյան Նարինե | 50000 |
| 2. | Ծատուրյան Հարություն | 100000 |
| 3. | Հովհաննիսյան Շուշիկ | 50000 |
| | Ընդամենը | 200000 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՐԵՎԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

---

«15» Փետրվարի 2013թ. թիվ 5-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԱՌԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Ը ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության գնումների մասին օրրենքի 168-րդ որոշման 32 կետի 5-րդ ենթակետի ա) կետը և խմելաջրի պոմպերի վերանորոգման հարցի հրատապությունը՝ պոմպերի վերանորոգման աշխատանքները կատարել բաց ընթացակարգով՝ առանց հայտարարություն.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ելնելով պոմպերի վերանորոգման աշխատանքների հրատապությունից այն կատարել բաց ընթացակարգով առանց հայտարարության:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմամ պահից:

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ |
|---|---|---|
| 1.Բեգլարյան Աշոտ | | |
| 2. Գրիգորյան Գագիկ | | |
| 3. Ալոյան Ալի | | |
| 4.Ասատրյան Հրաչիա | | |
| 5. Ղարիբյան Ղուկաս | | |
| 6. Շահնազարյան Հակոբ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՇԱՏՈՒՐՅԱՆ

2013թվականի փետրվարի «15»

Գ. Արենիկ